

# Հ.Յ.Դ. - ՊՈԼՇԵՒԻԶՍ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿՃՈԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ՝ ԸՆՆԱԿԱՆ ԼՈՅՍԻ ՏԱԿ

«Հայաստանը Հ.Յ.Դ.- Բոլշևիզմ Յարաբերութիւնների Ոլորտում. 1917 - 1921»

Դոկտ. Ռուբինա Փիրումեան

(Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, Երեւան, 1997)

3. Քիչքճեան

**Ա**ռաջին անգամն է որ, մեծագրական սպառնիչ ուսումնասիրութեան ձեւի տակ, միանգամայն պատմաբաններու եւ ընթերցող հասարակութեան կը տրամադրուի Հ.Յ.Դ-անակցութեան եւ Պոլշեւիկ կուսակցութեան յարաբերութիւններու՝ 1917-1921 վճռական հնգամեակը:

## «ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ» ՄԸ ՀԱՄԱՐ

Ճիշդ կ'արտայայտուի ակադեմիկոս Լենդրուշ Խոսրոստեան, երբ Ռուբինա Փիրումեանի այս աշխատասիրութեան առիթով կ'ըսէ, թէ «տարբեր կուսակցութիւնների պատմագրութեան առկայութեան» շատ բնական պայմաններուն մէջ, նոյնքան բնական -ու հրամայական- է ստեղծումը «բարձր մակարդակի ազգային, ակադեմիական պատմագրութեան»: Աշխատասիրութեան խըմբագիր եւ անոր յառաջաբանի ստորագիր հայրենի պատմագէտը իր հաստատումներու շարքը կը զարգացնէ շեշտելով, որ «ազգային գաղափարախօսութիւնից բխող» այդ պատմագրութիւնը առաւել սնունդ կը ստանայ «ազգային շահերի պաշտպանութեան» լծումը ազգային կուսակցութիւններէ (խօսքը հոս ըլլալով յատկապէս դաշնակցա-

կան պատմագրութեան մասին), որոնք ընդհանուր առմամբ «ելնում [են] պատմական իրողութիւնների ճշմարիտ վերլուծութիւնից» - ի տարբերութիւն «պատմութեան կեղծարարութիւնը առանցք» ունեցող բոլշեւիկեան [արդար ընդհանրացում մը պիտի ըլլար ըսել՝ «խորհրդային»] պատմագրութեան»...

Կարելի է անվարան ըսել, որ Ռ. Փիրումեանի աշխատանքը, գոնէ կարեւոր մասով, հիմնուած է «կուսակցական պատմագրութեան» ստեղծած «այն լուսագոյնին» վրայ, որ -գործածելով հատորը խմբագրող վաստակատր պատմաբանին բնորոշումը- «կը ներառուի ազգային, ակադեմիական պատմագրութեան մէջ». ինչպէս այդ «լուսագոյնին» վրայ են հիմնուած կարգ մը այլ պատմագիտական գործեր՝ սկսած Ս. Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւնը» երկի տիպէն դասակարգելով՝ մինչեւ նորեր ու նորագոյններ - գործերը Անահիտ Տէր-Սիմասեանի, Իվ Թերնոնի, Ժաք Տըրոթիի...

## ԳՈՐԾԸ՝ ԻՐ ՄԱՐՏԱՆՐԱԿԵՐՆԵՐՈՎ

Բայց, վերջապէս, քանի մը չոր տեղեկութիւններ՝ շահեկան այս գործին շուրջ: Աւելի քան չորս հարիւր էջերու վրայ տարածուած, ընկերուհի Ռ. Փիրումեանի աշխատանքը կու տայ պոլշեւիկներ-Հ.Յ.Դ-աշ-

նակցութիւն յարաբերութիւններու պատմութիւնը տասներկու գլուխներու տակ - սանցմէ վերջինը ըլլալով յատկացում՝ եզրակացութիւններու բանաձեւումին: Մտեցման հիմը հասկնալիօրէն ժամանակագրական ընթացքն է: Մինչ կեղորոնական հինգ գլուխներու կորիզ մը նուիրած է Հայաստանի Հանրապետութեան երկուքուկու տարիներուն, առաջին չորս գլուխներ նախապէս տուած էին Փետրուարեան Յեղափոխութեան, պոլշեւիկեան յեղաշրջման, Հայաստանի անկախացման անմիջապէս նախորդող շրջանի եւ ապա՝ Պաքոսի ինքնապաշտպանութեան առընչող միջեր: Իսկ աւարտին, ու նախքան եզրափակիչ խորհրդածութիւնները՝ երկու գլուխներ կը ծածկեն Փետրուարեան Ապրիտանքութիւնը եւ ռուս-բուրք դաշինքի «պսակման» փուլը:

Փիրումեանի ընտրած ժամանակաշրջանը կը ծածկէ իսկական մարտահրաւէր մը. մարտահրաւէր՝ որ զգացում ու մտոնանշում է Դաշնակցութեան պատմութեան յատկապէս այդ ժամանակաշրջանի հետազօտիչ պատմագիր-պատմագէտներու կողմէ առհասարակ՝ մէկ կամ միւս ուղղութեամբ. Ինչպէ՞ս իրարմէ անջատել հայոց պատմութեան ընդհանրական ընթացքը եւ «Դաշնակցութեան պատմութիւն»ը: Կամ, Ռ. Փիրումեանի գործի պարագային, կա՞յ մտաորմեթոտային «կարգապահութեան»

ձեռք էր չափ մը, որ արտօնէ գատելու մէկդի մղել պետութեան կամ ժողովուրդի պատմութիւնը, աւելի ցայտուն առաջին մակարդակի բերելու համար կուսակցութեան պատմութիւնը, կուսակցութեան գործը, կուսակցութեան յարաբերութիւնը - ինչպէս նիւթի տարագումը կը պահանջէ:

Պատասխանելով հոս իսկ դրուած հարցին, կը հակինք կասկածելու, որ այդպիսի «ոսկեղէն» մեթոտ, զանազանումի հրաշալի կարողութիւններով, գոյութիւն ունենայ: Եւ Ռ. Փիրումեան իր նիւթի ճշգրիտ առումին եւ սահմաններուն աւելի կը հետեւի հոն՝ ուր Դաշնակցութեան գործը եւ յարաբերութիւնները մօտ չեն նոյնանալու հայոց ընդհանրական պատմութեան ընթացքին. ուր կուսակցութեան դիմագիծը, անհատականութիւնը կը շեշտուին: Իսկ հոն՝ ուր կուսակցական այդ «ես»ը ջրնջրած կ'երեւի, կամ ջնջուելու մօտ՝ ազգային ձգտումներու ծառայութեան ճամբուն վրայ, - այն ատեն, վճռական այդ հնգամեակի շատ ուրիշ պատմագիրներէ ու պատմաբաններէ ետք, եւ անոնց մասն, Ռ. Փիրումեանը, դաշնակցական գործը եւ յարաբերութիւնները անջատ տեսնելու դժուարութեան առջեւ, կը հակի պատմագրելու-վերլուծելու «հայոց նորագոյն պատմութիւնը» իր ամբողջութեան մէջ: Տակաւին, ի տարբերութիւն Ռուբէնի մը, Վրացեանի մը, որոնց նիւթերը, առաւելաբար կուսակցութեան կազմակերպական-մեթոտն ուղարտին կասպտող, կը դիրացնեն մեթոտաբանական «կարգապահութեան» ջանքը, - Փիրումեանի ընդգրկած յարաբերական-արտաքին ուղարտը, հակառակը, իր ձեռնարկութիւնը կը դժուարացնէ աւելի ես:

Սիւս ատոր համար՝ այս ուսումնասիրութեան մէջ յատկապէս 1918ի Մայիսէն առաջ է, եւ 1921ի Յուլիսէն ետք, ուր Դաշնակցութիւն-պոլշեփիզմ յարաբերութիւնները կ'երեւին իբր կուսակցութենէ կուսակցութիւն ուղղուած յարաբերութիւններ: Ատով

իսկ՝ գործին առաջին ու վերջին մասերը կը ներկայանան աւելի ինքնուրոյն, աւելի անտիպի կնիքով՝ քան կեղտոնական մասը: Ասիկա իսկապէս ալ չի վնասեր գործի միատարրութեան, ոչ ալ նշուած մասերէն մէկէն միւսը՝ կը ստեղծէ արժէքի ու մակարդակի երկուութիւններ: Ծարագըրման ընդհանուր ոճը ինքնին բաւական գիտական-ակադեմական կնիք ունի՝ գործը կարենալ ներկայացնելու համար իբր միաձոյլ ամբողջութիւն:

Գիտական-ակադեմական շարադրանքի ընդհանուր նկարագիրը այնքան շեշտակի է ու բարերար՝ Փիրումեանի գործին մէջ, որ յաջողապէս կը հակակշռէ ենթակայական դրսեւորման փորձութիւնները, կամ -երբ անոնք արդէն կատարուած են- կը բարեխառնէ, կը մեղմէ զանոնք: Նաեւ որովհետեւ ենթակայականութիւնը հոս նուազ կը վերաբերի դաշնակցական Ռուբինա Փիրումեանին. այլ խօսքով՝ գաղափարական ենթակայականութիւն չէ, այլ՝ առաւելաբար զգացական-հոգեբանական: Ապրուած անհատ-հեղինակի մը կողմէ՝ որ «աշխատութիւնը» նուիրում [է] հօրը, Դուկտ. Բաղդիկ Միմասեանին, որ իր դուստրուած կուսակցութեան ճամբով իր կեանքը նուիրեց հայրենիքին ու հայ ժողովրդին» - հարկ է աւելցնել՝ երկա՞ր տարիներ ճաշակել է ետք խորհրդային բանտերու անհեթեթ ու անտանելի դառնութիւնը:

### ԸՆՏԻ ՄԸ ԱԿՆԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ.Յ.Դ.- պոլշեփիզմ յարաբերութիւններու պարբերացումը իւրաքանչիւր փուլի արարտին կը տրամադրէ եզրափակիչ ամփոփում-համադրումներ, ընդհանրացումներ: Սակայն ատիկա, ըստ փուլի, կը կատարուի աւելի կամ նուազ սպառնիչ ձեւով: Որոշ երեսներ, արդեօ՞ք ծաւալի հրամայականներու ենթակայ, կը փոխառեն հազիւ հայանցուած, ու մեզ ծարաւ կը ձգեն:

Ապա, աշխատանքը ամբողջացնելէ անդին՝ զայն «զմբէքատրելու» մտահոգութեամբ, ու աւելի ճոխ վերջաբանի մը մէջ, յատկապէս փափաքելի պիտի ըլլար ըստ էութեան աչքէ անցնել հետեւող եօթանասնամեակը՝ աւելի յագեցած ու յագեցընող ձեւով: Զննական վերլուծումի ուշագրաւ իրագործումները, տունալ հնգամեակի այս կամ այն երեսին հանդէպ, որքա՞ն հետաքրքրական կրնային ըլլալ, եթէ հասնէին արժեւորելու (կրկին՝ սաւառնումի արագութեամբ բայց «ըստ էութեան») Հ.Յ.Դ.-խորհրդային յարաբերութիւնները, կամ թէկուզ փոխադարձ վերաբերումները 1930ական տարիներուն, 1945ին, 1955ի շուրջ, 1965ին, կամ 1980ին - Նախալիական շեղումներէն մինչեւ Ման-Ֆրանսիսքօ, ՄԱԿի ծնունդի օրերն ու ներգաղթը, մինչեւ Պաղ Պատերազմն ու սառցահալը, մինչեւ քշմանանքի Դեմիրճեանական վերաբարձումները... եւ այլն: Առանց դեռ խօսելու նպատակայարմարութեան մասին՝ ուր-ազձելու Հ.Յ.Դ. - Մոցիալ-դեմոկրատիա յարաբերութիւնները, կամ պարզ փոխադարձ դիրքատրումները՝ սկսած դարասկիզբէն, յատկապէս 1905էն - այս մէկն ալ՝ հեղինակային ներածութեան մը մէջ, իբր պատմական խորք: Ուսումնասիրութիւնը, կը կարծեն, պիտի շահեր նրման շրջանակի մը մէջ տեղադրուելով. սակայն այս կամ այն մախասիրութիւնը, այս կամ այն մերձեցումը՝ վերջին հաշուով հեղինակային, այսինքն անձնական-մեթոտային ընտրանքի հարց է:

Բոլոր պարագաներուն, վերջին նշումները կը մեկնին ըստ ամենայնի շահեկան աշխատանք մը առաւել խոր ու ամբողջ տեսնելու բաղձանքէն - ինչպէս այս գրախօսականի բոլոր հաստատումներն ու բնորոշումները կը միտէին առաւելագոյն թափանցումով ու խանդավառութեամբ ընթերցողին բերելու «ազգային պատմագրութիւն ստեղծելու յաջողուած այս փորձը»: